ՍՈՒՄԳԱՅԻԹ. ԱՄԻՍՆԵՐ ԱՆՑ...

Արդեն երկար ու ցավոտ ամիսներ են անցել սումգայիթյան հրեշավոր օրերից: Օրեր առաջուանում ոճրի ու կատաղի ցասման, որոնք ասես հեղեղի ուժով թափվեցին առանց այն էլ տանջահար ու ժամանակին արդեն կոտորված ժողովրդի գլխին: Այլուն թափվեց, երեխաներ որբացան, կա նայիր անարգվեցիր...

Եվ այս ամենը՝ խորհրդային իրականության պայմաններում: Իրոք որ, անտակ է մեր ժողովրդի վիշտը, բայց և անհատնում՝ պայքարելու տենչը:

Տակավին այսօր հասարակության ամենատարբեր շրջաններում չեն դադարում խոսակցությունները սումգայիթյան ոճրի մասին: Ժողովուրդը դատապարտում է այն որպես քաղաքական նպատակներ ունեցող ոճրագործություն, որը նպատակ ունի իրականացնել հայերի բռնի ասիմիլյացիան, ղեկավարվելով պանթյուրքիզմի գաղափարներով կամ՝ վտարել նրանց կողմից հնազարամյակներ դրաղեցրած տարածքից: Նախիջևանն արդեն իսկ խոսուն օրինակ է: Իսկ նման քաղաքականության գոյությունը, որն, ի դեպ, ոչ ոք չի ուրանում, ինքնին ոչ մի հարցական չի հարուցանում: Ինչպես ասում է ժողովուրդը, ինչպիսի՞ խոճեր ունեցած դատավարությունից, երբ դիտեցիր այն ճարցի զուտ իրավական տեսանկյունից:

— Ցայրահեղ վատատեսական: Դատավարությունն արտաքուստ անաչառ էր: Նախագահող Բրիգեն հմուտ իրավաբան է, խստորեն պահպանում էր դատավարական կարգը, բայց, այդուհանդերձ, դատավարության մասնակիցներին լիաբովանդակ դուրս գալ հասարակ, շարքային քրեական գործի շրջանակներից, որի հետևանքով արդարադատությունը փոխվեց պատրանքի: Դատավարության ժամանակ մեր փաստաբանները մի շարք միջնորդություններ ներկայացրին, մասնավորապես նախաքննության բացերը լրացնելու, հանցագործությունների իրական կազմակերպիչներին բացահայտելու և պատասխանատվության կանչելու, քրեական գործը միասնականացնելու մասին: Բայց միջնորդությունները բավարարվեցին մասնակիորեն, իսկ գործի հետագա ընթացքի մասին ոչինչ հայտնի չէ: Մեր ուղարկած հարցադիմումները, նամակներն ու հեռագրերն այդպես էլ մնացին անպատասխան: Ժողովուրդը լավ է ասում. «Ձայն բարբառո հանապատի»:

— Ասացեք, խնդրեմ, իսկ խորհրդային հրեական օրենսդրությունը նախատեսո՞ւմ է, արդյոք, ցեղասպանությունը դատապարտող դրույթներ: Չէ որ 1948 թվականի ՄԱԿ-ի կողմից ընդունված ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի տակ ստորագրել է նաև խորհրդային Միությունը:

— Ներպետական գործող քրեական օրենսդրությունը ցեղասպանության մասին չունի ինքնուրույն քրեաիրավական նորմ, թեև ինչպես նկատեցիք, միացել է միջազգային այդ կարևորագույն կոնվենցիային, Տարօրինակ կերպով ներքին օրենսդրությունը չի համապատասխանեցված միջազգային կոնվենցիայի հետ ներկայումս փորձ է արվում մշակվող քրեական օրենսդրության հիմունքների նախագծի մեջ լրացնելու այդ բացը, թեև, ի դարմանս մեզ և քրեական իրավունքին շատ քիչ առնչվող մարդկանց, ցեղասպանությունը ներ օրենսդրության նախագծի մեջ ավելի մեղմ երանգներով է որակվում, քան թե դիտավորյալ բռնությունը. այստեղ ցեղասպանության համար նախատեսված չէ մահապատիժ: Սա, մեր կարծիքով, լուրջ բացթողում է, և մենք հանդես ենք եկել այն փոփոխելու առաջարկությունները:

Զրույցը վարեց
ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ

— Ընկեր Գրիգորյան, դուք հրեական իրավունքի գծով հանրապետության հեղինակավոր մասնագետներից եք և անձամբ մասնակցել եք նաև սումգայիթյան դատավարությանը: Այժմ, երբ արդեն ամիսներ են անցել մեր ժողովրդի համար այդ դժնի օրերից, երբ երևում են այսպես կոչված «սումգայիթյան գործի» կապակցությամբ արված բազում հանձնարարումներ, ամենատարբեր տեսակետներն ու գնահատականները, թերևս խելամիտ կլինի զուտ այժմ տալ դրանց նշմարտացի և ամբողջական գնահատականը:

— Սումգայիթյան իրադարձությունները հայ բնակչության նկատմամբ կազմակերպված ցեղասպանության ակտ է, որն իմ խորին համոզմամբ, ադրբեջանական ազգայնամոլների վարած քաղաքականության բաղկացուցիչ տարրն է: Քաղաքականություն, որը նպատակ ունի իրականացնել հայերի բռնի ասիմիլյացիան, ղեկավարվելով պանթյուրքիզմի գաղափարներով կամ՝ վտարել նրանց կողմից հնագարամյակներ դրաղեցրած տարածքից: Նախիջևանն արդեն իսկ խոսուն օրինակ է: Իսկ նման քաղաքականության գոյությունը, որն, ի դեպ, իր հովանավորողներն ունի, արդեն խաչտառակություն է խորհրդային բազմազգ միության համար: Այժմ տանք հանցագործության քրեաիրավաբանական բնութագիրը: Հենց սկզբից նշեմ, որ հանցագործության որակումը կատարվել է սխալ և ոչ ամբողջովին: Սումգայիթյան ոճրագործությունները որակվել են զուտ միայն որպես մասսայական անկարգություններ և դիտավորյալ սպանություններ՝ խուլիգանական դրդումներով: Հանցագործությունները քրեական օրենսգրքի այլ հոդվածներով չեն որակվել, թեև դրա անհրաժեշտությունն աներկբա է: Նախ դրանք պետք է որակվեն որպես «Ազգային և ռասայական իրավահավասարության խախտում», որը նախատեսված է ՀԽՍՀ քրեական օրենսգրքի 69 հոդվածով: Հայտնի է, որ Ամենդովը (ցեղասպանության ակտիվ մասնակիցներից մեկը) բարձրախոսը ձեռքին հայերին ոչնչացնելու կոչեր է արել: Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ վերը նշված հանցագործության օբյեկտիվ կողմի բաղկացուցիչ մասը: Դատավարության ժամանակ լքացահայտվեցին հանցագործության կատարման իրական շարժառիթները, մասնավորապես ազգային ատելությունը և կրոնական անհանդուրժողականությունը: Դրանք որակվեցին սոսկ իբրև «խուլիգանական դրդումներ»: Իսկ կատարվածն իբրև բանդիտիզմ որակելու հնարավորության հարցն ընդհանրապես քննարկման առարկա չդարձավ, թեև այդպիսի հնարավորությունն ակնհայտ է և անհրաժեշտ: Սրանք լուրջ թերություններ են, որոնք բխում են թե գործի թերի քննությունից, թե կատարվածը պետական մակարդակով խստորեն դատապարտելու ցանկության բացակայությունից: Իմ համոզմամբ, որպես դատավարության ականատես, ոճրագործությունը կատարվել է հենց ազգային հողի վրա՝ մարդիկ սպանվել են այն բանի համար, որ հայ են եղել: Կատարված ոճրագործության նկատմամբ անհրաժեշտ ուշադրություն չցուցաբերելը, պատշաճ իրավական և անհրաժեշտ քաղաքական գնահատական չտալը ստեղծեց անպատժելիության պատրանք և ավելի սանձարձակ դարձրեց կրիմինոգեն տարրերին: Հնարավոր դարձրեց Ադրբեջանի կողմից Հայկական ԽՍՀ-ի և ԼՂԻՄ-ի այսօր էլ շարունակվող տնտեսական շրջափակումը:

Զսպիացած վերքերին հաջորդեցին նորերը: Խոսքը Կիրովաբադի, Բաքվի, Շամխորի, այնուհետև նաև Ֆերգանայի և Նովի Ուզենի հայտնի իրադարձությունների մասին է:

— Ըստ ձեր ունեցած տեղեկությունների, դատավարության ի՞նչ փուլում է գտնվում այժմ «սումգայիթյան գործը»:

— Մեր ունեցած տեղեկությունները աղքատիկ են: Ուրախացնող որևէ նորություն չկա: Սումգայիթի մասին լռում են: Գործը թաղված է անտարբերության մոռացության: Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը դիմել է նաև ՀԽՍՀ դատախազությանն ու ՀԽՍՀ գերագույն դատարանին, որպեսզի վերջիններս կենտրոնական մարմինների միջոցով ինֆորմացիա հայտնեն գործի հետագա ճակատագրի մասին: Սակայն առ այսօր որևէ տեղեկություն չենք ստացել: Այս մասին լռում են նաև զանգվածային լրատվության կենտրոնական միջոցները: Այն փաստորեն արհեստականորեն կոծկվեց, դասվեց առօրեական քրեական գործերի շարքը: Մենք վճռականորեն դատապարտում ենք նման հակաօրինական և աչքակապ վերաբերմունքը:

ԶՐՈՒՅՑ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՀԵՏ

— Ինչպես իրավաբան, ինչպիսի՞ խոճեր ունեցած դատավարությունից, երբ դիտեցիր այն ճարցի զուտ իրավական տեսանկյունից:

— Ցայրահեղ վատատեսական: Դատավարությունն արտաքուստ անաչառ էր: Նախագահող Բրիգեն հմուտ իրավաբան է, խստորեն պահպանում էր դատավարական կարգը, բայց, այդուհանդերձ, դատավարության մասնակիցներին լիաբովանդակ դուրս գալ հասարակ, շարքային քրեական գործի շրջանակներից, որի հետևանքով արդարադատությունը փոխվեց պատրանքի: Դատավարության ժամանակ մեր փաստաբանները մի շարք միջնորդություններ ներկայացրին, մասնավորապես նախաքննության բացերը լրացնելու, հանցագործությունների իրական կազմակերպիչներին բացահայտելու և պատասխանատվության կանչելու, քրեական գործը միասնականացնելու մասին: Բայց միջնորդությունները բավարարվեցին մասնակիորեն, իսկ գործի հետագա ընթացքի մասին ոչինչ հայտնի չէ: Մեր ուղարկած հարցադիմումները, նամակներն ու հեռագրերն այդպես էլ մնացին անպատասխան: Ժողովուրդը լավ է ասում. «Ձայն բարբառո հանապատի».

— Ասացեք, խնդրեմ, իսկ խորհրդային հրեական օրենսդրությունը նախատեսո՞ւմ է, արդյոք, ցեղասպանությունը դատապարտող դրույթներ: Չէ որ 1948 թվականի ՄԱԿ-ի կողմից ընդունված ցեղասպանության վերաբերյալ կոնվենցիայի տակ ստորագրել է նաև խորհրդային Միությունը:

— Ներպետական գործող քրեական օրենսդրությունը ցեղասպանության մասին չունի ինքնուրույն քրեաիրավական նորմ, թեև ինչպես նկատեցիք, միացել է միջազգային այդ կարևորագույն կոնվենցիային, Տարօրինակ կերպով ներքին օրենսդրությունը չի համապատասխանեցված միջազգային կոնվենցիայի հետ ներկայումս փորձ է արվում մշակվող քրեական օրենսդրության հիմունքների նախագծի մեջ լրացնելու այդ բացը, թեև, ի դարմանս մեզ և քրեական իրավունքին շատ քիչ առնչվող մարդկանց, ցեղասպանությունը ներ օրենսդրության նախագծի մեջ ավելի մեղմ երանգներով է որակվում, քան թե դիտավորյալ բռնությունը. այստեղ ցեղասպանության համար նախատեսված չէ մահապատիժ: Սա, մեր կարծիքով, լուրջ բացթողում է, և մենք հանդես ենք եկել այն փոփոխելու առաջարկությունները:

Զրույցը վարեց
ԱՐԹՈՒՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԸ